Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-169-30.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝

1. «ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն» հասկացությունից հանել «լիցենզավորված անձին» բառերը.
2. 21-րդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«**կարգավորվող անձ՝** ցանցի լիցենզիա կամ համարի կամ կոդերի զբաղեցման կամ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն կամ սույն օրենքի համաձայն ծանուցում ներկայացնելու պարտավորություն ունեցող անձ.».

3. 28-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.
4. 33-րդ պարբերությունում «լիազորված» բառից հետո լրացնել ««կամ Կարգավորողին սույն օրենքի համաձայն ծանուցում ներկայացրած» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի՝

1. «բ» ենթակետից հանել «և ծառայություններ մատուցողի» բառերը.
2. «դ» ենթակետում «օրենսդրության» բառից հետո լրացնել «, Կարգավորողի կողմից ընդունված իրավական ակտերի» բառերը.
3. «իզ» ենթակետը ուժը կորցրած ճանաչել
4. լրացնել նոր «իը» ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

   «իը) սահմանել համարների տեղափոխելիության ծառայության վերաբերյալ կանոններ:».

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառերով:

Հոդված 4. Օրենքի Գլուխ 3-ի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ»:

Հոդված 5. Օրենքը լրացնել նոր 8.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 8.1 Ծանուցման պահանջը

1. Ցանկացած անձ, որը ցանկանում է մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, բացառությամբ այն ծառայությունների, որոնց մատուցման համար անհրաժեշտ է տիրապետել և շահագործել էլեկտրոնային հաղորդակցության ցանց, պարտավոր է գործունեություն սկսելու մասին գրավոր ծանուցի Կարգավորողին: Անձը կարող է սկսել իրականացնել իր գործունությունը ծանուցումը Կարգավորողին ներկայացնելուց հինգ աշխատանքային օր հետո, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Ծանուցումը պետք է ներառի տեղեկատվություն, որը հնարավորություն կտա բացահայտելու սույն հոդվածի առաջին մասի համաձայն ծանուցում ներկայացրած անձին, մասնավորապես՝ պետական գրանցման համարը կամ հաշվառման համարը և գտնվելու վայրը, ծառայությունների տեսակի համառոտ նկարագիրը՝ համաձայն Կարգավորողի կողմից ընդունված դասակարգչի, գործունեության աշխարհագրական տարածքը, գործունեությունը սկսելու նախատեսվող ժամկետը: Ծանուցումը պետք է ներկայացվի Կարգավորողի կողմից հաստատված և հրապարակված օրինակելի ձևաթղթով:

3. Այն դեպքերում, երբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար պահանջվում է սահմանափակ ռեսուրսի տրամադրում, սակայն չի պահանջվում ցանցի լիցենզիա, ապա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումն իրականացվում է սահմանափակ ռեսուրսի համար թույլտվությունը ուժի մեջ մտնելուց և սույն հոդվածի 1-ին մասում նշված ծանուցումն իրականացնելուց հետո:

4. Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար սույն հոդվածի առաջին մասի համաձայն ծանուցում ներկայացրած անձը պարտավոր է պահպանել ընդհանուր պահանջները, որոնք սահմանվել են կախված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայության տեսակից: Ընդհանուր պահանջները պետք

է ընդունվեն Կարգավորողի որոշմամբ, համաձայն թափանցիկության, հավասարության և համարժեքության սկզբունքի:

5. Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար սույն հոդվածի առաջին մասի համաձայն ծանուցում ներկայացրած անձը պարտավոր է իր գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու, վերակազմակերպման կամ անվանման (անվան) կամ գտնվելու վայրի կամ գործունեության աշխարհագրական տարածքի փոփոխման մասին գրավոր ծանուցի Կարգավորողին այդ գործողությունը կատարելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասից հանել «5-րդ հոդվածի 2-րդ կետի «իզ» ենթակետով և» բառերը:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «կամ 5-րդ հոդվածի 2-րդ կետի «իզ» ենթակետի համաձայն՝ Կարգավորողի որոշմամբ» բառերը.
2. 2-րդ մասի առաջին նախադասությունում «Լիցենզիաների» բառը փոխարինել «Լիցենզիայի» բառով.
3. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Ցանցի լիցենզիայի դիմումները բավարարվում կամ մերժվում են Կարգավորողի կողմից՝ այդ դիմումի ներկայացումից հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով:

Հոդված 9. Օրենքը լրացնել նոր 12.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 12.1 Ծանուցում ներկայացրած անձանց գործունեության կասեցումը և դադարեցումը

1. Կարգավորողն իրավասու է կասեցնել ծանուցում ներկայացրած անձանց գործունեությունը ծանուցված գործունեության մասով, եթե՝

1) ծանուցում ներկայացրած անձը դիտավորյալ կեղծ տեղեկություն է ներկայացրել ծանուցման մեջ կամ Կարգավորողին տրամադրված ցանկացած հայտարարության մեջ.

2) ծանուցում ներկայացրած անձը դիտավորյալ խախտել է սույն օրենքը կամ դրա համաձայն ընդունված որևէ կանոն կամ կանոնակարգ.

3) կասեցումը անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով.

4) ծանուցում ներկայացրած անձը չի վճարել համընդհանուր ծառայությունների որևէ վճար:

2. Կարգավորողն իրավասու է դադարեցնել ծանուցում ներկայացրած անձանց գործունեությունը ծանուցված գործունեության մասով, եթե՝

1) ծանուցած անձը խախտել է կամ չի կատարել սույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն տրված դադարեցման մասին հրահանգը.

2) դադարեցումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով:

Հոդված 10. Օրենքի 13-րդ հոդվածում բոլոր տեղերում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով:

Հոդված 11. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. Վերնագրում և բոլոր տեղերում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով.
2. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Ցանցի լիցենզիա կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու նպատակով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստացած անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայամասնակցության) նկատմամբ իրավունքի օտարում կամ այլ կերպ փոխանցում կամ զիջում կամ գրավադրում կամ այդ անձի գործունեությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի փոփոխություն կարող է իրականացվել միայն Կարգավորողի համաձայնությունը կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո:».

1) Հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված կարգավորվող անձանց նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու համար Կարգավորողի համաձայնությունը չի պահանջվում և սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց 15 աշխատանքային օր առաջ կարգավորվող անձը պարտավոր է դրա մասին գրավոր տեղեկացնել Կարգավորողին:»:

Հոդված 12. Օրենքի Գլուխ 3-ի Բաժին 2-ի վերնագրում «ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ» բառը փոխարինել «ԼԻՑԵՆԶԻԱՆ» բառով:

Հոդված 13. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1. 1-ին նախադասությունից հանել «կամ ծառայությունների մատուցման» բառերը, իսկ «լիցենզիայի» բառից հետո լրացնել «կամ սույն օրենքի համաձայն ծանուցման իրականացման» բառերով.
2. 2-րդ նախադասությունը հանել:

Հոդված 14. Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասում «տասնչորս» բառը փոխարինել «յոթ աշխատանքային» բառերով:

Հոդված 15. Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ նախադասությունը հանել:

Հոդված 16. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից հանել «կամ ծառայություն մատուցողի» բառերը:

Հոդված 17. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
2. 3-րդ մասի 1-ին կետից հանել «և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը» բառերը, իսկ «երեք ամսվա» բառերը փոխարինել «տասնհինգ աշխատանքային օրվա» բառերով.
3. 3-րդ մասի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
4. 4-րդ մասից հանել «կամ ծառայություններ մատուցողի» բառերը.
5. 5-րդ մասում «փոխանցել այլ օպերատորների կամ ծառայություններ մատուցողների» բառերից հետո լրացնել «բացառությամբ համարների տեղափոխելիության ծառայության մատուցման դեպքում:» բառերը.
6. 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով:

Հոդված 18. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասում՝

1. «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով.
2. «լիցենզիայով» բառից հետո լրացնել «կամ Կարգավորողի կողմից ծառայությունների մեջ գերիշխող ճանաչված անձանց գործունեությունը կարգավորող կանոններով» բառերը:

Հոդված 19. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասում՝ «չլիցենզավորված ծառայություններ» բառերը փոխարինել «չծանուցված ծառայություններ, կամ օգտագործում է ռադիոհաճախականություններ՝ առանց սույն օրենքի համաձայն տրված թույլտվության» բառերով:

Հոդված 20. Օրենքի 61-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենքի 62-րդ հոդվածում՝ բոլոր տեղերում «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով:

Հոդված 22. Օրենքի 63-րդ հոդվածում՝

1. «լիցենզավորված» բառը փոխարինել «կարգավորվող» բառով.
2. լրացնել նոր 4.1, 4.2 և 4.3 մասերով հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ ֆիզիկական անձը առանց Կարգավորողի թույլտվության շարունակում է օգտագործել ռադիոհաճախականություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ ֆիզիկական անձը վճարի տույժ կամ տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

4.2 Սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ իրավաբանական անձը առանց Կարգավորողի թույլտվության շարունակում է օգտագործել ռադիոհաճախականություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ իրավաբանական անձը վճարի տույժ կամ տուգանք, նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:

4.3 Ծանուցում չներկայացրած հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցած իրավաբանական կամ ֆիզիկական անձի նկատմամբ, սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձը առանց Կարգավորողին ծանուցման շարունակում է մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ իրավաբանական կամ

ֆիզիկական անձը վճարի տույժ կամ տուգանք, նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

Հոդված 23. «Սույն օրենքի գործողության մեջ մտնելու օրվա դրությամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու պարզ լիցենզիա ունեցող անձանց կապակցությամբ համարվում է, որ նրանք այդ ծառայությունը մատուցում են սույն օրենքի հիման վրա ներկայացված ծանուցման շրջանակներում, եթե այդպիսի ծանուցում պահանջվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 24. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Էլեկտրոնային հեռահաղորդակցության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առարկության, առաջարկություն հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	**ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Մ. Սարգսյան**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005թ. հուլիսի 8-ի թիվ ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված է, որ «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար սույն հոդվածի առաջին մասի համաձայն ծանուցում ներկայացրած անձը պարտավոր է պահպանել ընդհանուր պահանջները, որոնք սահմանվել են կախված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայության տեսակից: Ընդհանուր պահանջները պետք է ընդունվեն Կարգավորողի որոշմամբ, համաձայն թափանցիկության, հավասարության և համարժեքության սկզբունքի»: Առաջարկվում է «Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4.2 մասի համաձայն որպես Կառավարության առաջադրած օրենքի նախագծին կից ներկայացվող իրավական ակտ ներկայացնել Կարգավորողի որոշման նախագիծը: Միևնույն ժամանակ առաջարկվում է օրենքի նախագծին կից	**Չի ընդունվել:** Առաջարկվում է օրենքի նախագծին կից ներկայացնել Կարգավորողի համապատասխան որոշման նախագիծը, ինչպես նաև տեղեկանքում նշել օրենքի նախագծի այն մասերը, որոնք գործելու են Կարգավորողի որոշման ուժի մեջ մտնելուց հետո, սակայն կարծում ենք դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենքի նախագծի բոլոր մասերը գործելու են օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես, իսկ Կարգավորողի կողմից ընդունվելիք որոշմամբ պետք է միայն մանրամասնեցվեն այն պահանջները, որոնք արդեն իսկ սահմանված են գործող օրենքում և ներկայացված օրենքի	

		ներկայացվող իրավական ակտի ընդունման մասին տեղեկանքում նշել օրենքի նախագծի այն մասերը, որոնք գործելու են Կառավարության որոշման կամ իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից»:	նախագծում:	
2.	**ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Մ. Սարգսյան**	Հաշվի առնելով, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ բարդ լիցենզիան կհանվի 2014թ., ուստի առաջարկվում է օրենքի նախագծում սահմանել բարդ լիցենզիայի դադարեցման ստույգ ժամկետը:	**Ընդունվել է:**	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասնի» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ և 15-րդ հոդվածներում, և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասնի» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
3.	**ՀՀ կառավարություն**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին կետով սահմանված «ծանուցած անձը» բառերը փոխարինել «ծանուցում ներկայացրած անձը» բառերով: Սույն պահանջը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություն:

4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 9-րդ հոդվածի «12^1» թիվը փոխարինել «12.1» թվով, նկատի ունենալով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը: Նույն պահանջը վերաբերում է նաև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ և 7-րդ հոդվածներով նոր հոդվածների համարներին:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
5.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդվածով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացվող 23.1-րդ հոդվածի 2-րդ մասում «համապատասխան գործողության» բառերը փոխարինել «ծառայության մատուցման» բառերով, քանի որ լիցենզիա տալը, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելը, վերաձևակերպելը, այլ վայրում ևս լիցենզիա տալը հանդիսանում են լիցենզավորող մարմնի կողմից ծառայությունների մատուցում:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:
6.	**ՀՀ կառավարություն**	Հաշվի առնելով, որ Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է բարդ լիցենզիաների տրման համար ներկայումս գործող 30-օրյա ժամկետի փոխարեն սահմանել 23 աշխատանքային օր, ուստի առաջարկում ենք Նախագծի 9-րդ	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:

		հոդվածում լրացնել դրույթ, որով կփոխվի նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում նշված 30 օրվա ժամկետը:		
7.	**ՀՀ կառավարություն**	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում անհրաժեշտ է «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
8.	**ՀՀ կառավարություն**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		3-րդ մասի պահանջներին: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ, 22-րդ հոդվածներին, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 14-րդ և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածներին:		
9.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդվածում անհրաժեշտ է «հոդվածի» բառից հետո լրացնել «առաջին մասի» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, «օրենսդրություն» բառը փոխարինել «օրենսդրության» բառով՝ նկատի ունենալով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի դրույթները, «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածից անհրաժեշտ է «հետևյալ» բառը հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 7-րդ և 11-րդ հոդվածներին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
11.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 17-րդ հոդվածում անհրաժեշտ է «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
12.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 24-րդ հոդվածում անհրաժեշտ է «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ համաձայն Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:
13.	**ՀՀ կառավարություն**	Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 15-րդ և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածներին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

14.	**ՀՀ կառավարություն**	Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 3-րդ հոդվածում անհրաժեշտ է «23[1]» թիվը փոխարինել «23.1» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 7-րդ հոդվածին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: